



ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ
ՏԻԱՐ ՊԵՐԵՍ ԴԸ ԿՈՒԵԼՅԱՐԻՆ
ՄԱԿ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Նյու Յորք

Ձերդ Գերազանցություն,

Այս տարի նշվում է 75-րդ տարեկիցը Եղեռնի սարսափելի գործողության՝ իրականացված մեր հայ ազգի դեմ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ժամանակի թուրքական կառավարության կողմից: Աշխարհի բոլոր մասերում, Խորհրդային Հայաստանում և հայ ժողովրդի լայնատարած Սիյուրքում, հիշատակության հասարակական միջոցառումներ և դեպքեր են տեղի ունենում այս տարվա ընթացքում միլիոնավոր հայերի կողմից՝ մասնակցությամբ ոչ հայերի, որոնք անկեղծորեն մտահոգ են մարդու իրավունքով, արդարությամբ և խաղաղությամբ այսօրվա աշխարհում:

Հայկական ցեղասպանության հարցը լավ ծանոթ է Ձեզ և բոլոր պետություններին, որոնք անդամ են Միավորված Ազգերի Կազմակերպության: Վերջին տարիներին այն ձևեր է բերել անհրաժեշտության և կարևորության նոր ծավալ: Նա ազդել է և շարունակում է ազդել խորապես աշխարհի մոտ ութ միլիոն հայերի կյանքին:

Մենք՝ Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց և Գարեգին Բ Կաթողիկոս Կիլիկիո, հանդիպելով Փարիզում և մղված հոգևոր, մարդկային և ազգային պատասխանատվությամբ, Եղեռնի 75-ամյակին համարում ենք Աստուծո կողմից մեզ տրված պարտականություն՝ դիմելու Ձերդ Գերազանցության ամբողջ Հայ Եկեղեցու և ազգի անունից և խնդրել Ձեզ.

ա. Հանձնել այս արդար դատը 1990 թ. ՄԱԿ-ի անդամ պետությունների ուշադրության՝ ինչ ձևով և ընթացքով որ Դուք կհամարեք հարմար և արդյունավետ:

բ. Զանալ, որ այսօրվա թրքական իշխանությունները ճանաչեն Եղեռնի իսկական էությունը՝ հավատարով, որ այդպիսի ճանաչումը մեծապես կնպաստի փոխադարձ համկացողության:

գ. Ամեն ջանք թափել, որպեսզի խաղաղ միջոցներով մի արդար լուծում գտնվի այս տանջող հարցին՝ հայ ժողովրդի օրինավոր իրավունքներին, այնպես որ արդարություն կատարվի մեր հայ ժողովրդի նկատմամբ, որ այնքան շատ և երկար դարեր տառապել է:

Աղոթում ենք Աստծուն, որ ուժ տա Զեզ Զեր ազնիվ գործում և նվիրյալ ծառայության մեջ՝ համաշխարհային խաղաղության և արդարության միջազգային փոխհարաբերություններում:

Աղոթքով՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻԱՅԻ

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Փարիզ,

14 մայիս 1990 թ.

